ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ըստ կատարված վիճակագրության, Մասիսի համայնքապետարանի աշխատակազմի մի շարք բաժինների / Կոմունալ տնտեսության և տրանսպորտի, Առևտրի սպասարկման և գովազդի, Իրավաբանական, Կրթության, սպորտի,մշակույթի,երիտասարդության և առողջապահության, Քաղաքաշինության և հողաշինության աշխատակիցները, ինչպես նաև մամլո քարտուղարը, սոցիալական ոլորտը սպասարկող աշխատակիցները ևս իրենց աշխատանքային գործունեության մեծ մասը անցկացնում են համայնքապետարանից դուրս՝ Մասիս քաղաքում և տարբեր վարչական բնակավայրերում, ըստ անհրաժեշտության, նաև որոշ աշխատակիցներ / իրավաբանական բաժին, Մասիսի համայնքի խնամակալության և հոգաբարձուների խորհրդի անդամներ/ աշխատանքային այցեր են ունենում նաև ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ ամբողջ Հայաստանի Հանրապետության տարածքում: Վիճակագրության արդյունքները ցույց տվեցին, որ ամենօրյա ռեժիմով համայնքապետարանից ունենում ենք մոտավոր 20-25 աշխատակցի կողմից կատարվող մոտ 30-35 աշխատանքային տարբեր այցեր՝ տարբեր ուղղություններով, ընդ որում այցերի թիվը նույն աշխատակիցների կողմից կարող է լինել տարբեր ուղղություններով, օրվա տարբեր ժամերի: Վերոգրյալից ելնելով՝ հույժ անհրաժեշտություն է առաջանում ավելացնել գործող հաստիքացուցակում վարորդների թիվը ևս 3 –ով , ծանրաբեռնված աշխատանքային ռեժիմը հաշվի առնելով (հաճախ աշխատանքային այցերը կարող են երկարաձգվել աշխատանքային օրվա ավարտից հետո, որոշ դեպքերում նաև ոչ աշխատանքային օրերին) կատարել փոփոխություն նաև նրանց պաշտոնային դրույքաչափերում:

Նույն ծանրաբեռնվածության սկզբունքից ելնելով՝ առաջարկում եմ կատարել փոփոխություն նաև խմբակցության գործավարների ու տնտեսվարի պաշտոնային դրույքաչափերում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքապետարանի 5-րդ հարկը հիմնանորոգվել է և հանձնվել շահագործման, անհրաժեշտություն է առաջացել նաև 1 հավաքարարի հաստիքի ավելացման՝ շենքի մաքրության և սանիտարական վիճակի աշխատանքները հավուր պատշաճի կազմակերպելու համար:

Այսպիսով, աշխատանքային ծանրաբեռնվածությունից ելնելով, աշխատանքները որակյալ, ճիշտ և օպերատիվ կազմակերպելու նպատակով առաջարկում եմ կատարել հետևյալ փոփոխությունը Մասիսի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի թվաքանակում և պաշտոնային դրույքաչափերում.

1. վարորդ – 3 հաստիքային միավորին ավելացնել ևս 3-ը / ընդամենը 6/, պաշտոնային դրույքաչափ սահմանել նախկին 170.000-ի փոխարեն՝ 210.000 ՀՀ դրամ,
2. հավաքարար- 30 հաստիքային միավորին ավելացնել 1-ը / ընդամենը՝ 31/,
3. տնտեսվար- պաշտոնային դրույքաչափ սահմանել նախկին 220.000 –ի փոխարեն 270.000 ՀՀ դրամ,
4. խմբակցության գործավար- պաշտոնային դրույքաչափ սահմանել նախկին 120.000-ի փոխարեն 150.000 ՀՀ դրամ:

Զեկուցող՝ ՔԱԿՏՏ բաժնի պետ Ծովինար Գալստյան